

ՀԱՅ ԵՐԱԺԻՇՏՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ ԹՈՒՐԳԱԿԱՆ ԵՐԱԺՇՏՈՒԹՅԱՆ
ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳՈՐԾՈՒՄ

Ասատրյան Ա. (ՀՀ ԳԱԱ արվեստի ինստիտուտ, Հայաստան)

instart@sci.am

Բանալի բառեր՝ թուրքական երաժշտություն, թուրքական առաջին օպերետ, հայ երաժիշտներ, հայկական նոր ծայնագրություն, երաժշտական առաջին պարբերաթերթ, թուրքական դաշնամուրային երաժշտություն:

Ոչ միայն հայ հոգևոր երաժշտության գիտակ, այլև թուրքական, արաբական և հունական երաժշտությանը կատարելապես տիրապետող **Համբարձում Լիմոնճյանի** (1768-1839) ստեղծած Հայկական նոր ծայնագրությունը (1815) լայնորեն կիրառել են թուրք երաժիշտները:

Արիստակես Հովհաննիսյանն ու **Գաբրիել Երանյանը** Կ.Պոլսում հայերեն, թուրքերեն, ֆրանսերեն և հունարեն լեզուներով հրատարակել են «**Քնար արևելյան**» (1857-1858) երաժշտական ամսաթերթը՝ եվրոպական նոտագրությամբ տպագրելով դաշնամուրի, ջութակի և այլ նվագարանների համար գրված ստեղծագործությունների նոտաները՝ նպատակ ունենալով քաղաքակիրթ աշխարհին ներկայացնել նրանց դեռևս անծանոթ արևելյան երաժշտությունը: Սա ուներ պատմական կարևոր նշանակություն՝ փաստորեն, Թուրքիայում առաջին անգամ հրատարակված երաժշտական պարբերաթերթն էր, որը դրեց եվրոպական նոտագրության տարածման սկիզբը Թուրքիայում:

Տիգրան Չուխաճյանը (1837-1898) արևելյան երաժիշտներից առաջինն էր, ով ստանալով մասնագիտական երաժշտական կրթություն և կատարելապես տիրապետելով եվրոպական

կոմպոզիտորական տեխնիկային՝ փորձեց գտնել Արևելքի և Արևմուտքի երաժշտական մշակույթների մերձեցման ուղիները, արևելյան երաժշտության սեփականությունը դարձրեց օպերային, սիմֆոնիկ ու կամերային-գործիքային երաժշտության բարդ ժանրերը: Ըստ անտիկ ավանդության, Հոմերոսի ծննդավայրը համարվելու պատվի համար վիճել են Հին Հունաստանի յոթ քաղաքներ: Եթե վեճ գնար Տ. Չոլխաճյանի համար, ապա պիտի վիճեին ոչ թե միևնույն երկրի քաղաքները, այլ երկու տարբեր, հարևան պետություններ՝ Հայաստանը և Թուրքիան: Բայց վեճ չի հարուցում Տ. Չոլխաճյանը՝ խորհրդանիշն այն բացառիկ երևույթի, երբ միևնույն անձը երկու ժողովուրդների պատմության ու կյանքի մեջ է մտնում միաժամանակ թե՛ իբրև երաժշտական թատրոնի հիմնադիր, թե՛ իբրև եվրոպական կամերային-գործիքային ու սիմֆոնիկ երաժշտության մի շարք կարևոր ժանրերի սկզբնավորող: Դեռևս կյանքի օրոք Չոլխաճյանը դարձավ համաարևելյան երևույթ: Նա ոչ միայն թուրքական, այլև առհասարակ՝ մերձավոր արևելյան երաժշտական թատրոնի հիմնադիրն է, ում գործունեությունը մեծ նշանակություն ունեցավ թուրքական երաժշտության հետագա զարգացման համար: Տ. Չոլխաճյանը թուրքական օպերետի հիմնադիրն է. «Լեբլեբիջի Հոր-հոր աղան» համարվում է թուրքական առաջին օպերետը, որի հաջողությունից ոգևորված՝ Ահմեդ Միդհատն ու Պետրի բեյը գրում են իրենց օպերետները՝ «Զեյբեկներ», «Վարդագույն աղջիկ», «Ճենկի», «Զիպա» և այլն: Ի տարբերություն «Լեբլեբիջիի», որը նախատեսված էր եվրոպական սիմֆոնիկ նվագախմբի կատարման համար, թուրք երաժիշտների գործերը գրված էին արևելյան նվագախմբի համար (ուղ., լավութա, ջութակ, դափ, թմբուկ և նմանօրինակ նվագարաններ): Տ. Չոլխաճյանն է թուրքական դաշնամուրային անդրանիկ օpus-ների հեղինակը. նրա “Fantaisies orientale sur des motifs turc” (N 1, N 2) դրեցին թուրքական պրոֆեսիոնալ գործիքային՝ դաշնամուրային

երաժշտության հիմքերը:

Թուրքիայում մշտական օպերետային թատրոն ստեղծվեց Անկարայում (1928), իսկ մշտական օպերային թատրոնները՝ ավելի ուշ. Անկարայի կոնսերվատորիայի օպերային ստուդիայի հիման վրա 1949-ին հիմնադրվեց Անկարայի պետական օպերային թատրոնը, իսկ 1960-ին՝ Ստամբուլի քաղաքային օպերան (հետագայում՝ Ստամբուլի օպերայի և բալետի պետական թատրոն): Մինչդեռ 1870-ականներին **S. Չոլխաճյանի** և **Տիգրան Գալեմճյանի** ղեկավարությամբ Կ.Պոլսում ստեղծվեց «Օսմանյան օպերային թատերախումբը»՝ ողջ Մերձավոր Արևելքում անդրանիկ երաժշտական թատերախումբը, որի ավանդույթները հետագայում շարունակեց **Սերովբե Պենկյանը**: Իսկ **Արշակ Պենկյանը** 1908-ին Կ.Պոլսում հիմնադրեց Օսմանյան երաժշտական թատրոնը՝ 40 հոգուց բաղկացած օպերետային խումբը:

Թուրքիայի Հանրապետության պետական հիմնը «Անկախության քայլերգն» է, որի տեքստը 1922-ին գրել է Մեհմետ Ակիֆ Էրսոյը, իսկ երաժշտությունը՝ Օսման Զեքի Ունգերը՝ 1924-ին: Հիմնի գործիքավորումը կատարել է սփյուռքահայ կոմպոզիտորների նահապետ **Էդգար Մանասը**: Զարմանալիորեն՝ հիմնի երաժշտական կտավում ակնհայտ են տիպիկ չոլխաճյանական դարձվածքներ:

CONTRIBUTION OF ARMENIAN MUSICIANS TO THE DEVELOPMENT OF TURKISH MUSIC

Asatryan A. (National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Arts,
Armenia)